Հաստատում եմ՝
Տնօրենի պարտականությունները
կատարող՝ Մ.Նավասարդյան

12 սեպտեմբեր 2023թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Տարաս Շևչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց

Կարինա Միքայելի Սիրեկանյան
(դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը)
12 ընդհանուր դասարան

2023-2024 ուսումնական տարի

ԴԱՍԱՐԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐԸ

Դասարան՝ 12 ընդհանուր

Դասղեկ՝ Կարինա Միքայելի Սիրեկանյան

1. Աշակերտների թիվը դասարանում՝ 23
   ա) աղջիկ՝ 9
   բ) տղա՝ 14

2. Վատ ապահովված ընտանիքների թիվը՝ 1
   Նրանցում երեխաների թիվը՝ 2

3. Բազմազավակ ընտանիքների թիվը՝ 1
   Նրանցում երեխաների թիվը՝ 5

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Քաղաքացիական, բարոյականդաստիարակություն

Սովորողի՝ որպես անձի, ձևավորման գործում կարևորելով անձի բարոյական դաստիարակությունը պետք է նրանց մեջ սերմանել պատասխանատվություն հայրենիքի հանդեպ, կարգապահություն, սկզբունքայնություն, հասարակությանը և պետությանը օգուտ բերելու պատրաստակամություն, քաղաքացիական ինքնագիտակցություն:

2.Հոգևոր դաստիարակություն

Հայեցի դաստիարակության, հոգեկերտվածքի ձևավորման նպատակով աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ, կազմակերպել այցելություններ մոտակա հոգևոր, պատմամշակութային օջախներ: Կատարել պատմական ակնարկ՝ խորացնելով գիտելիքները պատմամշակութային օջախների, եկեղեցական և պետական տոների մասին:

3.Գեղարվեստական դաստիարակություն

Գեղագիտական ճաշակի ձևավորմանը նպաստելու նպատակով անհրաժեշտ է աշակերտին ծանոթացնել մշակույթին, գրականությանը, արվեստին, ծանոթացնել ազգային ավանդույթներին և տոներին: Կազմակերպել այցելություններ մշակութային հաստատություններ, թանգարաններ, կազմակերպել հանդիպումներ գրողների, մշակութային բնագավառի տարբեր ներկայացուցիչների հետ: Անցկացնել զրույցներ՝սերմանելու համար սեր գեղեցիկի նկատմամբ:

4.Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Ռազմահայրենասիրական կրթություն և դաստիարակություն սերմանելու նպատակովանհրաժեշտ է անցկացնել ռազմա-հայրենասիրական թեմաներով զրույցներ, կազմակերպել քննարկումներ՝սովորողների մոտ ձևավորելով հայրենիքի նկատմամբ հավատարմության, սիրո, հպարտության, պարտքի զգացում, սերմանել ակնածանք հայոց բանակի հանդեպ:

5.Ֆիզիկական դաստիրակություն

Կարևորելով ֆիզիկական դաստիարակության, առողջ ապրելակերպի դերն ու նշանակությունը մեր կյանքում, օգնել աշակերտին վերահսկել, պահպանել և բարելավել իր հոգեկան և ֆիզիկական առողջությունը: Ֆիզիկական ակտիվությունը հնարավորություն է տալիս վարել ակտիվ կյանք, բարելավել ինքնագնահատականը, խթանել թիմային աշխատանքը, օգնել զարգացնել այնպիսի կարևոր արժեքներ, ինչպիսիք են հանդուրժողականությունը, հարգանքը, համերաշխությունն ու պատասխանատվությունը:

6.Աշխատանքային դաստիարակություն

Սովորողների մոտ ձևավորել այն համոզմունքը, որ աշխատանքը հանդիսանում է հասարակության նյութական և հոգևոր հարստության հիմնական աղբյուր: Աշակերտների մեջ սերմանել աշխատանքի նկատմամբ սեր և պահանջմունք, աշխատասիրություն, նպատակասլացություն, պատասխանատվություն, նրանց մղել հանրօգուտ աշխատանքներին ակտիվ մասնակցության:

7.Բնապահպանական դաստիարակություն

Էկոլոգիական գիտակցության ձևավորումը արդի խնդիրներից մեկն է: Անհրաժեշտ է սովորողներին ծանոթացնել բնապահպանական հիմնախնդիրներին, սովորեցնել պահպանել հայրենի բնությունը, ձևավորել բնության հանդեպ հոգատար վերաբերմունք, մասնակցել Մերձդպրոցական տարածքի կանաչապատմանը: Կազմակերպել էքսկուրսիաներ:

ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Ուսումնառության գործընթացում կարևորվում է ընտանիքի դերը, քանի որ այն հանդիսանում է պետության կորիզը: Դպրոց-ընտանիք կապը աշակերտի կրթության որակի բարձրացման և ապագա օրինակելի քաղաքացի կրթելու կարևոր նախադրյալն է: Ուստի, կարևոր է ծնողներին ներգրավել արտադասարանական, արտադպրոցական միջոցառումներին, մշտապես իրազեկել իրենց երեխաների առաջադիմության, կարգապահության և հաճախումների մասին, համատեղ բացահայտել և քննարկել սովորողի հետաքրքրությունները:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ

Ուսումնա-կան շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ամսաթիվ	Կատարվել է	Նշումներ Հիմնավորել պլանավորած-չկատարված աշխատանքի պատճառը
1-ին	Գիտելիքի օրվան նվիրված զրույց Կազմակերպչական հարցեր, դասագրքերի հանձնում	Սեպտեմբեր	Սովորող, դասղեկ	
2-րդ	Հաճախումների , ուշացումներին վերաբերվող հարցերի քննարկում	Սեպտեմբեր	Սովորող, դասղեկ	
3-րդ	Ծնողական ժողովի նապատրաստում և կազմակերպում	Սեպտեմբեր	Սովորող, դասղեկ	
4-րդ	Առաջադիմության և դասերին պատրաստվելու հարցեր	Սեպտեմբեր	Սովորող, դասղեկ	
5-րդ	Ուսուցչի տոնին նվիրված նապատրաստական աշատանքներ	Սեպտեմբեր	Սովորող, դասղեկ	
6-րդ	Դժվար դաստիարակվող երեխաների հետ առանձնակի զրույցներ	Հոկտեմբեր	Սովորող, դասղեկ	
7-րդ	Կարգապահական հարցեր և ուշացումներ	Հոկտեմբեր	Սովորող, դասղեկ	
8-րդ	Զրույց «Կոնֆլիկտներ և դրանց լուծման եղանակներ» թեմայով	Հոկտեմբեր	Սովորող, դասղեկ	
9-րդ	Զրույց Մասնագիտություններ, որ հետաքրքրում են ինձ՝ անկախ Հայաստանի քաղաքացուս թեմայով:	Նոյեմբեր	Սովորող, դասղեկ	
10-րդ	Դասղեկի անցկացրած միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը	Նոյեմբեր	Սովորող, դասղեկ	
11-րդ	Ֆիլմի դիտում	Նոյեմբեր	Սովորող, դասղեկ	
12-րդ	Թեմա՝ Միասնությունը տանում է դեպի ամուր ընտանիք ու հզոր հայրենիք	Դեկտեմբեր	Սովորող, դասղեկ	
13-րդ	Զրույց նվիրված <<Արտակարգ իրավիճակներ>> թեմային	Դեկտեմբեր	Սովորող, դասղեկ	

14-րդ	Աշակերտների ընթացիկ առաջադիմության դինամիկայի մոնիթորինգ	Դեկտեմբեր	Սովորող, դասղեկ	
15-րդ	Ամանորյա տոնին նվիրված աշատանքներ	Դեկտեմբեր	Սովորող, դասղեկ	
16-րդ	Առաջին կիսամյակի ուսումնական արդյունքների ամփոփում	Հունվար	Սովորող, դասղեկ	
17-րդ	2-րդ կիսամյակի կազմակերպչական հարցերի քննարկում	Հունվար	Սովորող, դասղեկ	
18-րդ	Զրույց՝ նվիրված հայոց բանակի օրվան	Հունվար	Սովորող, դասղեկ	
19-րդ	Թեմա՝ Ես պարտավոր եմ հայ հերոսներից ժառանգած հայրենիքը դարձնել հզոր ու անպարտելի	Փետրվար	Սովորող, դասղեկ	
20-րդ	Զրույց նվիրված <<Տյառնընդառաջին>>	Փետրվար	Սովորող, դասղեկ	
21-րդ	Գիրք նվիրելու օր, Մայրենիի օր	Փետրվար	Սովորող, դասղեկ	
22-րդ	Կազմակերպչական հարցերի քննարկում	Փետրվար	Սովորող, դասղեկ	
23-րդ	Ի՞նչ է սերն ու նվիրվածությունը	Մարտ	Սովորող, դասղեկ	
24-րդ	Կանանց միջազգային օր	Մարտ	Սովորող, դասղեկ	
25-րդ	Զրույց նվիրված Թատրոնի օրվան	Մարտ	Սովորող, դասղեկ	
26-րդ	Ի՞նչ կլինի, եթե բոլորը դադարեն սիրել	Ապրիլ	Սովորող, դասղեկ	
27-րդ	Զրույց նվիրված ծիծաղի օրվան	Ապրիլ	Սովորող, դասղեկ	
28-րդ	Նշել մայրության և գեղեցկության օր	Ապրիլ	Սովորող, դասղեկ	
29-րդ	Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակման օր	Ապրիլ	Սովորող, դասղեկ	
30-րդ	Աշխատավորների միջազգային օր	Մայիս	Սովորող, դասղեկ	

31-րդ	Զրույց նվիրված հայրենական մեծ պատերազմին	Մայիս	Սովորող, դասղեկ	
32-րդ	Մայիսյան հաղթանակներ, եռատոն	Մայիս	Սովորող, դասղեկ	
33-րդ	Միասնությունը տանում է դեպի ամուր ընտանիք ու հզոր հայրենիք	Մայիս	Սովորող, դասղեկ	
34-րդ	<< Վերջին զանգ>> խորագրով գեղարվեստական ցերեկույթի մասնակցություն	Մայիս	Սովորող, դասղեկ	

Աշակերտական խորհուրդը բաղկացած է 3 անդամից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ	ԿԱՏԱՐՈՂ	ՄԵԿՆԱԲԱՆԵԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԸ	ՆՇՈՒՄՆԵՐ
Սեպտեմբերի 1-ին նվիրված նախապատրաստական աշխատանքներ	01/09	12ընդ		

ԴԱՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

Ծնողական ժողովներ

Անցկացման օրը	Քննարկվող հարցերը	Համառոտ բովանդակությունը	Ծանոթություն
12/10	Կազմակերպչական հարցեր ավարտական դասարանում	Առաջադիմություն, հաճախումներ, ուշացումներ	ծանոթացան

ԾՆՈՂԿՈՄԻՏԵՆ ԲԱՂԿԱՑԱԾ Է 3 ԱՆԴԱՄԻՑ